ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2020/15

ք. Երևան «07» մայիսի 2020թ.

Վիճակագրական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գարանտսերվիս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Նիկողոսյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 4):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 908000 (ինը հարյուր ութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների գնման դեպքում մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝

ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

1) ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

2) ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

3) ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

4) Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

5) Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայության մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ		ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Վիճակագրական կոմիտե Կառավարական տուն 3 ՀՎՀՀ 02507509 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ Ա.900011011013, Բ.900011011021, 900011011054 Գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյան---------- (ստորագրություն) Կ.Տ.	Գ.	<<Գարանտսերվիս>> ՍՊԸ ք. Երևան, Թբիլիսյան 20 ՀՎՀՀ 00840437 Կոնվերսբանկ ՓԲԸ Հ/Հ 193004674290 Տնօրեն՝ Մ. Նիկողոսյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 07 » մայիսի 2020թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2020/15
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ -

ԳՆԱՑՈՒՑԱԿ առանձին տեսակի ծառայության մատուցման համար ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ բանաձևով հաշվարկված միավորի գների

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանումը		Առանձին տեսակի ծառայության մատուցման համար հաշվարկված միավորի գները						
	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունները և վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի, նյութերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Չափման միավոր	Տոյոտա Քամրի մակնիշի /2013թ. շարժիչ 2.5 լիտր/	Հյունդայի Սոնատա /2012 թ. 2.4 լիտր/	Հյունդայի Էլանտրա /2012 թ. 1.6 լիտր/	Հյունդայի Էլանտրա /2011 թ. 1.6 լիտր/	Ռենո Սանդեռո մակնիշի /2010թ. շարժիչ 1.6 լիտր/	Կիա Օպտիմա մակնիշի /2013թ. շարժիչ 2.4 լիտր/	Նիսսան Ուրվան մակնիշի /2010թ. շարժիչ 2.5 լիտր/
1	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
2	Յուղի զտիչ	հատ	-	-	-	-	-	5000	8000
3	Շարժիչի յուղ սինթետիկ 5W40, 1 լիտր	լիտր	-	-	-	-	-	4500	4500
4	Շարժիչի յուղ սինթետիկ 5W30, 1 լիտր	լիտր	-	-	-	-	-	6500	6500
5	Վառոցքի մոմերի փոխարինում /4 հատ/	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
6	Վառոցքի մոմեր	հատ	8000	8000	8000	8000	7000	8000	10000
7	Վառելիքի զտիչի փոխարինում	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
8	Վառելանյութի զտիչ	հատ	55000	28000	25000	25000	22000	26000	28000

9	Օդի զտիչի փոխարինում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
10	Օդի զտիչ	հատ	12000	11000	11000	11000	10500	11000	13000
11	Կոնդիցիոների զտիչի փոխարինում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
12	Կոդիցիոների զտիչ	հատ	13000	13000	13000	12000	12500	13000	14000
13	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	հատ	25000	25000	25000	25000	25000	25000	35000
14	Բենզամղիչի փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
15	Բենզամղիչ էլեկտրական	հատ	110000	95000	95000	95000	90000	98000	118000
16	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
17	Ռադիատոր	հատ	135000	125000	115000	115000	108500	116000	120000
18	Թերմոստատի փոխարինում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
19	Թերմոստատ	հատ	16000	15000	14000	14000	13000	15000	17000
20	Գեներատորի փոկի փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
21	Գեներատորի փոկ	հատ	35000	28000	26000	26000	25000	28000	32000
22	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
23	ԱՓՏ-ի յուղի զտիչ	հատ	35000	28000	28000	28000	25000	28000	31000
24	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
25	ԱՓՏ-ի յուղ	լիտր	9000	9000	9000	9000	9000	9000	9000
26	Հարվածամեղմիչի թասակի փոխարինում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
27	Հարվածամեղմիչի թասակ	հատ	36000	32000	29000	29000	28000	32000	34000
28	Առջևի հարվածամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
29	Առջևի հարվածամեղմիչ	հատ	85000	82000	80000	80000	78000	83000	105000
30	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
31	Հարվածամեղմիչի վռան	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
32	Գնդե հոդակապի փոխարինում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
33	Գնդե հոդակապ	հատ	34000	28000	26000	26000	25000	28000	32000
34	Հետևի հարվածամեղմիչի փոխարինում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000

35	Հետևի հարվածամեղմիչ	հատ	85000	80000	55000	55000	50000	80000	78500
36	Գեներատորի հանում, տեղադրում կամ փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	15000
37	Գեներատոր	հատ	165000	155000	155000	155000	145000	152000	160000
38	Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
39	Գեներատորի ռելե	հատ	38000	35000	34000	34000	32000	36000	38000
40	Գեներատորի դիոդային կամրջակի փոխարինում	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
41	Գեներատորի դիոդային կամրջակ	հատ	30000	28000	28000	28000	26000	27000	29000
42	Գեներատորի փոկանիվի փոխարինում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
43	Գեներատորի փոկանիվ	հատ	38000	35000	32000	32000	32000	34000	38000
44	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
45	Բենդեքս	հատ	35000	32000	30000	30000	28000	32000	34000
46	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
47	Մեկնարկիչի կցորդիչ ավտոմատ	հատ	52000	50000	48000	48000	40000	50000	53000
48	Մեկնարկիչի փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	10000
49	Մեկնարկիչ	հատ	145000	135000	130000	130000	120000	132000	142000
50	Լամպի փոխարինում	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000
51	Լամպ քսենեն	հատ	40000	40000	40000	40000	40000	40000	40000
52	Անիվի հանում և տեղադրում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
53	Անվադողի վերանորոգում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
54	Անվադողի քանդում և հավաքում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
55	Անիվի բալանսավորում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
56	Քարշակի ծառայություն գին 1 կմ, համար	կմ	300	300	300	300	300	300	300
57	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	հատ	-	-	-	-	20000	-	-
58	Շարժիչի ատամնավոր փոկ	հատ	-	-	-	-	35000	-	-

59	Հիդրոուժեղարարի յուղի փոխարինում	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000
60	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	լիտր	7000	7000	7000	7000	7000	7000	7000
61	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտի փոխարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
62	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	հատ	58000	55000	52000	52000	50000	55000	52000
63	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտի փոխարինում	հատ	4000	4000	4000	4000	4000	4000	4000
64	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	հատ	42000	35000	34000	34000	32000	35000	36000
65	Ապակեմաքրիչի փոխարինում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
66	Ապակեմաքրիչ	հատ	11000	10000	10000	10000	10000	10000	10000
67	Ջրի մղիչի փոխարինում	հատ	20000	20000	20000	20000	20000	20000	20000
68	Ջրի մղիչ	հատ	65000	58000	55000	55000	52000	58000	65000
69	Հակասառիչ հեղուկի /անտիֆրիզի/ ավելացում կամ փոխարինում	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000
70	Հակասառիչ հեղուկ /անտիֆրիզ/	լիտր	4000	4000	4000	4000	4000	4000	4000
71	ՓՏ-ի յուղի փոխարինում	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000
72	ՓՏ-ի յուղ	լիտր	8000	8000	8000	8000	8000	8000	8000
73	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխաինում	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000
74	ՓՏ-ի փոխանցման լծակ	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
75	Ձախ կամ աջ հոդակապերի փոխարինում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
76	Ձախ կամ աջ հոդակապեր	հատ	90000	85000	85000	85000	80000	85000	90000
77	Ապահովիչի փոխարինում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
78	Ապահովիչ	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000
79	Առջևի թարթիչի լապտերի լամպի փոխարինում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
80	Առջևի թարթիչի լապտերի լամպ	հատ	8000	8000	8000	8000	8000	8000	8000
81	Հետևի թարթիչի լապտերի լամպի փոխարինում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
82	Հետևի թարթիչի լապտերի լամպ	հատ	4000	4000	4000	4000	4000	4000	4000

83	Հակամշուշային լապտերի լամպի փոխարինում	հատ	3000	3000	3000	3000	3000	3000	3000
84	Հակամշուշային լապտերի լամպ	հատ	11000	11000	11000	11000	11000	11000	11000
85	Առջևի / հետևի / անվաբացքի կարգաբերում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
87	Համակարգչային դիագնոստիկա	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
88	Կայծաբաշխիչ կոճ / 1 հատ /	հատ	39000	35000	35000	35000	33000	35000	36000
89	Կայծաբաշխիչ կոճի փոխարինում	հատ	3000	3000	3000	3000	3000	3000	3000
90	Կցորդման սկավառակի կոմպլեկտ	հատ	145000	-	105000	105000	95000	90000	135000
91	Կցորդման սկավառակի կոմպլեկտի փոխարինում	հատ	40000	40000	40000	40000	40000	40000	55000
92	Կայունարարի վռան /ութնյակ /	հատ	6000	5000	5000	5000	5000	5000	5000
93	Կայունարարի վռանի /ութնյակ / փոխարինում	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000
94	Ղեկի գնդաձև հոդակապ	հատ	30000	28000	25000	25000	24000	26000	32000
95	Ղեկի գնդաձև հոդակապի փոխարինում	հատ	4000	4000	4000	4000	4000	4000	5000
96	Ղեկի ժապավեն	հատ	75000	65000	65000	65000	65000	65000	85000
97	Ղեկի ժապավենի փոխարինում	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
98	Կոճղակների փախարինում	հատ	5000	5000	5000	5000	5000	5000	5000
99	Կայունարարի կանգնակի փոխարինում	հատ	2000	2000	2000	2000	2000	2000	2000
100	Կայունարարի կանգնակ	հատ	32000	26000	25000	25000	20000	26000	29000
101	Դիագնոստիկա անսարքությունների վերացումով	հատ	10000	10000	10000	10000	10000	10000	10000
102	Սրահի օդի զտիչի փոխարինում	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
103	Սրահի օդի զտիչ	հատ	1000	1000	1000	1000	1000	1000	1000
104	ղեկային կալունի վերանորգում	հատ	45000	45000	45000	45000	45000	45000	45000
105	Ղեկային կալունի վերանորոգման կոմպլեկտ	հատ	40000	38000	38000	38000	35000	38000	40000

106	Հարվածամեղմիչի բարձիկի փոխարինում	հատ	6000	6000	6000	6000	6000	6000	6000
107	Հարվածամեղմիչի բարձիկ	հատ	15000	15000	15000	15000	15000	15000	15000
108	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 կտորի համար	հատ	50000	50000	50000	50000	50000	50000	50000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ Ա.900011011013, Բ.900011011021,
Գ.900011011054
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Գարանտսերվիս>> ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան 20
ՀՎՀՀ 00840437
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 193004674290
Տնօրեն՝
Մ. Նիկողոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 07 » մայիսի 2020թ. կնքված N ՀՀ ԿԿ-ՄԱ-ԾՁԲ-2020/15
ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազ. դրամ

N	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չափման միավորը	Ծառայության									
				I եռ		II եռ.		III եռ.		IV եռ. /մինչև դեկտեմբերի 15-ը/		Ընդամենը	
				Միջոցառ	գինը /հազ. դրամ/	Քանակը	գինը /հազ. դրամ/	Միջոցառ	գինը /հազ. դրամ/	Միջոցառ	գինը /հազ. դրամ/	Միջոցառ	գինը /հազ. դրամ/
Ա. «Վիճակագրության քաղաքականության մշակում և իրականացում, պաշտոնական վիճակագրական տեղեկատվության մշակում, արտադրում և տարածում» միջոցառում /01.03.02.1143.11001/													
1	50111130-1	Տոյոտա Քամրի պ/հ 032LL55 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ			1	50.0	1	104.0	1	180.0	1	180.0
2	50111130-3	Հյունդայի Սոնատա պ/հ 150SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ			1	40.0	1	80.0	1	140.0	1	140.0
3	50111130-2	Հյունդայի Էլանտրա պ/հ 122SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն	դրամ			1	19.0	1	40.0	1	88.0	1	88.0
Բ. «Վիճակագրության տեղեկատվության հավաքում» միջոցառում /01.03.02.1143.11002/													
4	50111130-1	Հյունդայի Էլանտրա պ/հ 120SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն				1	62.5	1	93.75	1	125.0	1	125.0
5	50111130-2	Ռենո Սանդեռո պ/հ 121SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն				1	62.5	1	93.75	1	125.0	1	125.0

Գ. «Հերթական մարդահամարի նախապատրաստման և անցկացման միջոցառումների իրականացում» միջոցառում /01.03.02.1143.11003/														
6	50111130-2	Կիա Օպտիմա մակնիշի պ/հ 130SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն				1	56.25	1	93.75	1	125.0	1	125.0
7	50111130-1	Նիսսան Ուրվան մակնիշի պ/հ 123SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն				1	56.25	1	93.75	1	125.0	1	125.0

գնման ժամանակացույցը ներկայացված է աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ Ա.900011011013, Բ.900011011021,
Գ. 900011011054
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Գարանտսերվիս>> ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան 20
ՀՎՀՀ 00840437
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 193004674290
Տնօրեն՝
Մ. Նիկողոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« 07» մայիսի 2020թ. կնքված N ՀՀ ԿԿ-ՄԱ-ԾՁԲ-2020/15
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. դրամ

N	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդա-մենը
Ա. «Վիճակագրության քաղաքականության մշակում և իրականացում, պաշտոնական վիճակագրական տեղեկատվության մշակում, արտադրում և տարածում» միջոցառում /01.03.02.1143.11001/															
1	50111130-1	Տոյոտա Քամրի պ/հ 032LL55 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն					50.0	50.0	104.0	104.0	104.0	180.0	180.0	180.0	180.0
2	50111130-3	Հյունդայի Սոնատա պ/հ 150SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն					40.0	40.0	80.0	80.0	80.0	140.0	140.0	140.0	140.0
3	50111130-2	Հյունդայի Էլանտրա պ/հ 122SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն					19.0	19.0	40.0	40.0	40.0	88.0	88.0	88.0	88.0
Բ. «Վիճակագրության տեղեկատվության հավաքում» միջոցառում /01.03.02.1143.11002/															
4	50111130-1	Հյունդայի Էլանտրա պ/հ 120SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն					62.5	62.5	93.75	93.75	93.75	125.0	125.0	125.0	125.0
5	50111130-2	Ռենո Սանդեռո պ/հ 121SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն					62.5	62.5	93.75	93.75	93.75	125.0	125.0	125.0	125.0

Գ. «Հերթական մարդահամարի նախապատրաստման և անցկացման միջոցառումների իրականացում» միջոցառում /01.03.02.1143.11003/															
6	50111130-2	Կիա Օպտիմա մակնիշի պ/հ 130SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն					56.25	56.25	87.5	87.5	87.5	125.0	125.0	125.0	125.0
7	50111130-1	Նիսսան Ուրվան մակնիշի պ/հ 123SS60 ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն					56.25	56.25	87.5	87.5	87.5	125.0	125.0	125.0	125.0

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վիճակագրական կոմիտե
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ Ա.900011011013, Բ.900011011021,
Գ. 900011011054
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Գարանտսերվիս>> ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան 20
ՀՎՀՀ 00840437
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 193004674290
Տնօրեն՝
Մ. Նիկողոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4
« 07 » մայիսի 2020թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2020/15
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 07» մայիսի 2020թ. կնքված N ՀՀ ՎԿ-ՄԱ-ԾՁԲ-2020/15
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն